ՀՀ ԿԳՄՍՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Կառավարման խորհրդի

նախագահ Ա. Բարեղամյան

«16» 02 2024թ.

(ստորագրություն)

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱՋՄԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Քաղաքականությունը:

1. Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը անձնակազմի զարգացման ապահովումն է: Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի քաղաքականության նպատակն է Քոլեջի մարդկային կապիտալի, մասնագիտական աճի բարձրացումն ու զարգացումը:

Սույն քաղաքականությունը միտված է հետևյալ գործընթացների իրականացմանը՝

- Քոլեջի կադրերի որակավորման բարձրացման համար հնարավորությունների ստեղծում,
- աշխատակիցների մասնագիտական գործունեությունից բավարարվածության բարձրացում,
- մասնագիտական ոլորտում առաջխաղացման հարցերում աջակցություն Քոլեջի ղեկավար կազմի կողմից,
- անձնակազմի մասնագիտական հնարավորությունների կատարելագործում և զարգացում՝ Քոլեջի գործունեության արդյունավետության բարձրացման համար:

Հիմնական խնդիրներն են՝

- մասնագիտական առաջընթացի ապահովման համակարգի կատարելագործումը՝ նոր մեխանիզմների մշակման միջոցով,
- ժամանակակից, ամբողջական մասնագիտական առաջընթացի ապահովման և աջակցման մեխանիզմների մշակումը:

Հիմնական սկզբունքներն են՝

- մասնագիտական առաջընթացի քաղաքականության իրականացման մեջ Քոլեջի պատասխանատու ստորաբաժանումների և ղեկավար անձնակազմի ակտիվ համագործակցություն,

- աշխատակիցների մասնագիտական աճի և աշխատանքի արդյունավետության բարձրացման աջակցություն՝ մրցակցային միջավայրի ստեղծման, արդյունքների և ձեռքբերումների օբյեկտիվ մեթոդների օգտագործման հաշվին,
- հետադարձ կապի մեխանիզմների ակտիվ օգտագործում, հարցումների պարբերաբար անցկացում՝ աշխատակազմի բավարարվածության և սպասելիքների բացահայտման համար:

Քոլեջի բոլոր աշխատակիցները իրավունք ունեն և պարտավոր են անընդհատ զարգացնել իրենց մասնագիտական ունակությունները, որոնք կապահովեն կրթական գործունեության առավել բարձր ցուցանիշներ:

Մասնագիտական առաջընթացի ապահովումը ենթադրում է՝

- նոր կրթական տեխնոլոգիաների, այդ թվում ինֆորմացիոն տեխնոլոգիաների տիրապետում,
- մասնագիտական ոլորտի որոշակի խնդիրների բարձրաձայնելը,
- լեզվական կարողությունների զարգացումը:

Քոլեջի կողմից ապահովվում և խրախուսվում են մասնագիտական առաջընթացի ապահովման հետևյալ հիմնական միջոցառումները՝

- մասնակցություն դասընթացներին, սեմինարներին, կոնֆերանսներին,
- ինքնուսուցում աշխատանքային վայրում,
- անձնակազմի մասնակցությունը որակի ապահովմանը ուղղված դասընթացներին և սեմինարներին,
- անձնակազմի ուսուցման շարունակականություն կամ վերապատրաստումներ,
- մասնակցություն արտերկրյա դասընթացներին, պրակտիկաներին և այլն:

Սույն քաղաքականության իրականացնող մարմիններն են Քոլեջի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, կադրերի բաժինը, ստորաբաժանումներ (մասնավորապես ամբիոնները), որոնք առնչություն ունեն կադրերի ապահովման և զարգացման գործընթացներին: Քոլեջում դասախոսական կազմի մասնագիտական

առաջընթացի ապահովումը պետք է երաշխավորի կադրերի զարգացումը և Քոլեջի գործունեության արդյունավետության բարձրացումը:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

1. Ընթացակարգի նշանակությունը և կիրառման ոլորտը

1.1 Սույն ընթացակարգը որոշում է Քոլեջի կադրային մասնագիտական առաջընթացի ապահովման միասնական կարգը և բխում է դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունից:

1.2 Սույն ընթացակարգը ուղղված է դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման պահանջների իրականացմանը:

1.3 Ընթացակարգում սահմանված պահանջները պարտադիր են Քոլեջի ղեկավար կազմի, համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների կողմից կիրառման համար:

2. Ընդհանուր դրույթներ

2.1 Մասնագիտական առաջընթացի ապահովման շրջանակներում կարող են կիրառվել հետևյալ ձևերը՝

- մասնակցությունը սեմինարներին, թրեյնինգներին և այլ միջոցառումներին,
- փորձի փոխանակման կազմակերպում այլ ուսումնական հաստատություններում, գիտահետազոտական կենտրոններում և կազմակերպություններում,
- համատեղ հետազոտական գործունեության ծավալում այլ Քոլեջների հետ:
- Աշխատակիցների ուսուցման կազմակերպում՝ մասնագիտացված դասընթացների շրջանակներում:

2.2 Հավասարության սկզբունք

- Մասնագիտական առաջընթացի ապահովումը պետք է հասանելի լինի յուրաքանչյուր աշխատակցին՝ արդարության սկզբունքին համապատասխան, և պետք է նպաստի անձի սեփական կապիտալի և Քոլեջի զարգացմանը:

2.3 Նպատակ և պահանջարկի ուսումնասիրում

- Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման նպատակն է անձնակազմի կոմպետենցիաների զարգացումն ու կատարելագործումը, որոնք անհրաժեշտ են մասնագիտական գործունեության ամրապնդման և մասնագիտական մակարդակի զարգացման, ինչպես նաև Քոլեջի կողմից դրվող կրթական խնդիրների լուծման, նոր, ժամանակակից մեթոդների յուրացման և կիրառման համար:
- Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի պահանջարկի ուսումնասիրում:

Դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի զարգացումն իրականցվում է հետևյալ շրջանում

- դասախոսների ընդունելության ժամանակ,
- մասնագիտական վերապատրաստումների պահանջի ուսումնասիրման ժամանակ,

2.4 Միջոցառումների կազմակերպում և իրականացում:

- Ձեռքբերած մասնագիտական գիտելիքների կիրառում և տարածում
- Միջոցառումները կազմակերպվում են ինչպես Քոլեջի շրջանակներում, այնպես էլ ՀՀ բուհերում և կազմակերպություններում, որոնց հետ Քոլեջն ունի կնքված համապատասխան պայմանագրեր:

Դասախոսները մասնագիտական զարգացման միջոցառումների ավարտին կարող են ստանալ սերտեֆիկատներ: Մասնագիտական զարգացման միջոցառումներին մասնակցած աշխատակիցը պարտաոր է ստացված գիտելիքները կիրառել Քոլեջում և կիսվել իր գիտելիքներով և կարողություններով գործընկերների հետ: